Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
օգոստոսի 28-ի N 1217-Լ որոշման

2025 ԹՎԱԿԱՆԻ ԼՈԼԻԿԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1. 2025 թվականի լոլիկի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) նպատակն է Հայաստանի Հանրապետությունում 2025 թվականին տնտեսությունների կողմից արտադրված լոլիկի բերքի իրացման գործընթացին աջակցելու նպատակով սուբսիդավորել տոմատի մածուկի արտադրությամբ զբաղվող լոլիկի մթերումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին:

2. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2. Միջոցառման մասնակիցներն են՝

1) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն).

2) Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզպետների աշխատակազմերը (այսուհետ՝ մարզպետների աշխատակազմեր).

3) տոմատի մածուկի արտադրությամբ զբաղվող լոլիկի մթերումներ իրականացնող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը.

4) լոլիկի մթերումներ իրականացնող կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին լոլիկ մատակարարող տնտեսությունները:

3. Միջոցառման իմաստով շահառու են համարվում տոմատի մածուկի արտադրությամբ զբաղվող լոլիկի մթերումներ իրականացնող կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին լոլիկ մատակարարող տնտեսությունները (այսուհետ՝ շահառու), որոնք զբաղվում են լոլիկի արտադրությամբ:

4. Միջոցառման իմաստով տնտեսավարող սուբյեկտներ են համարվում Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերում տոմատի մածուկի արտադրությամբ զբաղվող լոլիկի մթերման գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ), որոնք միջոցառման 6-րդ կետում նշված դիմումի ներկայացման օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ չունեն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ:

5. Հայաստանի Հանրապետությունում 2025 թվականին տոմատի մածուկի արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին լոլիկի մթերման համար սուբսիդավորման տրամադրման պայմանները հետևյալն են՝

1) 2000 տոննան ներառյալ լոլիկի մթերում իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին սուբսիդավորում չի տրամադրվում.

2) 2000 տոննան գերազանցող մթերված լոլիկի յուրաքանչյուր 1 կգ-ի դիմաց տրամադրվում է 10.0 Հայաստանի Հանրապետության դրամի չափով սուբսիդավորում:

6. Միջոցառման շրջանակներում սուբսիդավորում ստանալու համար տնտեսավարող սուբյեկտն էլեկտրոնային կամ թղթային տարբերակով (գրությամբ) դիմում է նախարարություն՝ համագործակցության համաձայնագիր կնքելու նպատակով:

7. Նախարարության և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքվող համագործակցության համաձայնագրում նշվում է նաև, որ մթերվող լոլիկի 1 կգ-ի նվազագույն գինը կազմում է 40 դրամ:

8. Միջոցառման շրջանակներում 2025 թվականին տոմատի մածուկի արտադրությամբ զբաղվող լոլիկի մթերումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներն ապահովում են մթերման գործընթացի թափանցիկությունը, մթերվող լոլիկի քանակների փաստաթղթավորումը և տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև ապահովում են մշտադիտարկում իրականացնող անձանց ազատ

մուտքը մթերման կետեր, դրանցում տեղակայված կշռման տարածքներ և վերջին-ներիս պահանջով մթերման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկատվության տրամադրումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ